Այս օրերս, ինչպէս հաղորդում է «Գրիազովսկի Կրայ» լրագիրը, Ռոստովի ոստիկանութեանը յաջողուել է ձերբակալել մի ոմն Կալօմիրցեվի, որ սպանել էր Նախիջեւանի Ս. խաչ վանքի հայ վարդապետին և դատապարտուած էր այդ յանցանքի համար Սիբիր աքսորուելու։ Ոստիկանութեան ասելով՝ Սկլաւունին հաղորդել էին, որ Կալօմիրցեվը Ռոստովումն է գտնվում։ Երկար որոնելուց յետոյ Սկլաւունին տեղեկացաւ, որ նա փոխադրուել է Կոզլով քաղաքը, ուր և ուղևորուեցաւ։ Այն տեղ իմանալով Կալօմիրցեվի բնակութեան տեղը, նա իւր հետն առնելով պրիստաւի օգնականին և չորս զինուոր, գնաց մարդասպանի բնակարանը, ուր և գտաւ նրան։ Կալօմիրցեվն սկզբում իրան բաւական հանգիստ էր պահում, բայց երբ ոստիկանները մօտեցան նրան կապանաւորելու, նա ձեռքը դէպի գրպանը տարաւ և հանեց ռէվոլվէրը, բայց բաղաւորապէս նրա ձեռքերը ժամանակին բռնեցին և զինաթափ արին։

***

«Նասլի» ընկերութեան վարչութիւնը մեր թերթի միջոցով յայտնում է իւր շնորհակալութիւնը հետեւեալ անձանց նոցա կատարած նուիրատուութիւնների համար յօգուտ մանկական հիւանդանոցի.

Պ. Նովակ—5 ռուբլի. Ե. Կօժինա—5 ռուբ. տիկ. Հ. Ալթանդիլեան—10 ռ. Մ. Զիլոսզեան — 30 ռ. Ե. Վալրցէլ—5 ռ. Ա. Պուշկարիովա—3 ռ. Կունդուբին—10 ռուբ., և Գոնէը և Լայց, Կաֆեան և Մերիմանեանց նուիրած են իրեղէններ։

***

Ստացանք պ. Գերցենշտէյնի կազմած „Тифлисскій настольный календарь на 1896 годъ“ երրորդ տարին։ Օրացոյցը կազմուած է բարեխղճութեամբ և բովանդակում է հարուստ տեղեկութիւններ Թիֆլիզի և Կովկասի վերաբերմամբ։ Օրացոյցի մէջ կան բոլոր պետական, հասարակական, բարեգործական և այլ հաստատութեանց հասցէները։ Պ. Գերցենշտէյնը բաւական ամփոփ տեսութիւն է տալիս այդ օրացոյցում հայոց և վրաց գրականութեան վերաբերութեամբ։

Մեծադիր և մաքուր է տպագրուած։ Գրքի գինը շատ էժան է—25 կոպէկ։

***

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, դեկտ. 14-ին դերասանական խումբը՝ ի նպաստ տ. Փառանձեմի և պ. Աւետեանի, ներկայացրեց մեր հնագէտ և պատմագիր Ալէքսանդր Երիցեանի փոխադարձ «Սխալ հաշիւ» կատակերգութիւնը։ Այս աշխոյժ կատակերգութիւնը պատկերացնում է գաւառի նեղ և սահմանափակ կեանքը, ուր Սիրական-աղայի պէս խեղճ մարդն անդամ կարող է որոգայթներ լարել, մարդկանց իրար դէմ զինել և ամբողջ հասարակութիւնը վրդովել։ Կարծես ճակատագրական մի այժով մարդիկ հալածում են միմեանց, իրար կատաղի թշնամի են համարում, պաշտպանուելու և յարձակուելու պատրաստվում, և երբեմն ուժեղագոյն յետոյ միայն հասկանում են՝ այն էլ դիպուածով և ոչ գիտակցաբար, որ «սխալ հաշիւ» է։ Խաղն ընդհանրապէս յաջող անցաւ. պ. Աբէլեանն ինքնավստահ երիտասարդ բժիշկ էր, Ստեփանեանը ժամանակից յետ մնացած, անուշադիր բժշկի անտտամ շարութիւնը ներկայացրեց։ Նպատակները՝ տ. Փառանձեմն ու պ. Աւետեանը և մանաւանդ տիկին Աւետեանը իրանց խաղով գոհացուցիչ տպաւորութիւն թողեցին։

Վերջը խաղացին պ. Սարդարեանի յայտնի «Օրիորդաբի բէֆը» վոդեվիլը։

Թատրոնը գրեթէ լիքն էր։

***

ԳԱՆՁԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԸ

—

Այսօր տեղի ունեցաւ տեղւոյս քաղաքային ուսումնարանի դպրոցական տարեկան ակտը։

Տեսչի կարդացած ուսումն. տարուայ հաշուից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները։

Այս տարի լրանում է ուղիղ 12 տարի այն օրից, երբ այս դպրոցը սկզբնական դրութիւնից փոխուել է երեքդասեան քաղաքային ուսումնարանի, 7 բաժանմունքներով։ Ցայժմ դպրոցը 9 անդամ է աւարտողներ տուել, թուով ընդամենը 94 հոգի, որոնց մեծ մասը դարձել է հաշուապահ, իսկ մնացածները կամ շարունակել են ուսումը կամ արհեստաւորներ են դարձել։ Քաղաքային ուսումնարանի աշակերտները բացի ծրագրի մէջ որոշած առարկաներից սովորում են նաև կաշուից պայուսակներ, գօտիներ, շան վզնոցներ և այլն պատրաստելը։

Դպրոցն ունի 200-ից աւելի աշակերտ, մեծ մասը հայ. Տարեկան եկամուտն է 8728 ռ., որից 1125 ռ. տալիս է տէրութեան դանձարանը, 2600-ից աւելի՝ քաղաքը, իսկ մնացածը կազմըւած է թոշակագրամներից և զանազան ազբիւրներից։ Աշակերտներից 15% միայն ձրիավարժ է, մնացածները 16-ական ռուբլի թոշակագրամ են վճարում։ Դպրոցի տարեկան ծախսն է 7788 ռ. միայն արհեստ. բաժնի պահպանութեան համար քաղաքը ծախսում է 640 ռ.։

Դպրոցն ունի ֆիզիքական կաբինէտ և գրադարան 1057 հատոր գրքերից բաղկացած, որոնցից կիսից աւելի մանկական են։ Ամենից աւելի աչքի է ընկնում ուսումնարանի շէնքի փոքրութիւնը. միջին թուով մի աշակերտի դալիս է ընդամենը 10 խոր. արշին տարածութիւն, այն է՝ երեք անդամ քիչ առողջ. պահանջածից։

Դպրոցում մի համակրելի սովորութիւն կայ, այն է աշակերտներին մեծ դասամիջոցին ձրիապէս թէյ է բաժանվում։

Պ. տեսչի կարդացած հաշիւը բաւական համառօտ և պակասաւոր էր. արդեօք մանկավարժ. ժողովներ, դպրոցական աշակերտական հանդէսներ

Այդ միևնոյն օրը, մի փոքրիկ հանդէս կատարուեց նաև մեր երկրագործական օրիորդաց ծխական ուսումնարանում, «ծնողական ժողով» անունով։

Հանդիսի սկզբում պ. աւագ-ուսուցիչը մի բանախօսութիւն է արել հրաւիրուած ծնողներին, բացատրելով նրանց իրանց պարտաւորութիւնները դէպի երեխայոց ընտանեկան դաստիարակութեան գործը և ընդհանրապէս դէպի դպրոցը։ Ափսոսում են, որ մենք չհասանք այդ հետաքրքրական բանախօսութեան։

Յետոյ մի քանի աշակերտուհիներ ռուսերէն և հայերէն ոտանաւորներ կարդացին և երգեր երգուեցին։ Մի աշակերտուհի էլ բարձրացաւ ամբիօն և սկսեց ճառել ընտանիքի և ամուսնութեան մասին. բայց այդ ճառը ուրիշ մի բան չէր, եթէ ոչ Խրիմեան Հայրիկի «Գրքոյկի ընտանիքից»՝ «Տուն և ընտանիք» գլուխը։ Հետաքրքրական էր իմանալ թէ մանկավարժական որ հեղինակ վրայ խեղճ աշակերտուհուն ստիպել էին այդ փիլիսոփայական, դժուար և հակայական յօդուածը (տես «Ընտիր հատուածներ» I մ.) *ծայրէ ի ծայր անգիր անել։* Հաւատացէք, պարոններ, որ մենք աշակերտուհու փոխանակ զղում էինք, սպասելով որ ահա աշակերտուհին կը-սխալուի։ Խէղճ երեխայ, քիչ թուղթակ են դարձրել և ով գիտէ ինչ չարչարանք ես քաշել, մինչև անգիր ես արել այդքան դժուար դասը...գոնէ գրքի վրայ կարդար. մինչև անգամ այդ դէպքում կրճատութիւններ անհրաժեշտ էին։ Յօդուածն աշակերտուհու հասկացողութիւնից միանգամայն բարձր է։

Ահա այն հանդէսը, որ «ծնողական ժողով» անունն էր կրում. գոնէ այդպէս էր տպուած հրաւերթղթերի վրայ։

Բայց ինչպէս երևում է մեր մանկավարժները ծնողական ժողով կազմելու ձևն իսկ չգիտեն։ Այդ ժողովին փոխանակ ոտանաւորների, անգիր ասած յօդուածների և երգերի, պէտք էր ծնողների և ուսուցիչների ընտանեկան դաստիարակութեան վերաբերեալ կարծիքների փոխանակութիւնը, որ բոլորովին բացակայ էր այդտեղ. բաւական չէ քսրոդի նման ամբիօնից ընդհանուր խրատներ կարդալ ծնողներին. այսպիսով նրանք ոչինչ չեն օգտուիլ, պէտք է աւելի մօտիկ կոչել գործին։

Աւագ-ուսուցչի ճառից յետոյ ուխտաքը հազիւ մի ոտանաւոր էին կարդացել, որ ծնողներից մէկը մի նկատողութիւն արաւ հետևեալ ոճով. «Ուրեմ մեզ ցոյց տուիք մեր պակասութիւնները. թոյլ տուէք ինձ էլ հարցնել ձեզ՝ ինչու մեր երեխաները ահա երկու ամիս է կրօն չեն սովորում»։ Եւ ինչ էք կարծում, նկատողութիւն անող պարոնը բացատրութեան փոխանակ կոպիտ յանդիմանութիւն միայն ստացաւ, թէ նկատողութիւն անելու ժամանակը չէ հայրն հայրն, քանի որ դեռ ոտանաւորներ ունին ասելու—Ո՛չ, պարոններ, պէտք էր պատասխանել, ընդհակառակը ոտանաւորներ ասելու ժամանակը չէ։ Նոյն իսկ եթէ կարգադրիչների տեսակէտից նայենք հանդիսին, այնու ամենայնիւ այդ հանդէսը խանգարողին, որ քաղաքավարութեան կարգերի հետ ծանօթ չէր՝ հասարակ դասից գոլով, պէտք չէր կոպիտ նկատողութեամբ վիրաւորել՝ «թէ դուք էլ բան ուզեցաք ասել» հեգնական խօսքերով. չէ որ, պարոններ, տալի պէտք էր ուրախանալ, որ մի ծնող հետաքրքրվում է տանը իր որդոց ուսումնարանական պարապմունքներով. չէր կարելի մի թէ քաղաքավարի և սառն կերպով նրա նկատողութեանը պատասխան տալ։

Վերջապէս ծնողի նկատողութիւնը բոլորովին ճիշտ էր և տեղին։ Հոգաբարձութիւնը չի կարող արդարանալ թէ կրօնուսոյցը հիւանդ է և թէ նրա փոխարէն կրօնի դասերին ուրիշ առարկաներով են զբաղվում։ Նախ պիտի է, որ կրօնի *ընդհանուր* դասերին ուրիշ զբաղմունք է տրվում և երկրորդ՝ թէ այդպէս էլ լինի, դա չի քաւիլ յանցանքը. չէ որ ուրիշ առարկան կրօնի տեղը չի բռնիլ։

Բայց մենք չենք էլ ասում, թէ կրօնուսոյցին պէտք էր փոխել, քանի որ այդչափ երկար հիւանդ է. քաւ լիցի. դա ամենամեծ անզգուշութիւն կը լինէր հոգաբարձութեան կողմից։ Մեր ասածն այս է, որ հոգաբարձուները անփոյթ են վերաբերուել իրանց գործին. նոյն իսկ նիւթականի կողմից էժան պրծնելու տեսակէտից նայելով, կարելի էր խնդրել քաղաքիս մի քանի հասկացող, մի ժամանակ կրօնուսոյց եղած քահանաներին, և նոքա, հաւատացած ենք, չէին մերժիլ իրանց օգնութիւնը դպրոցին։ Ի՞նչ կ'ասէք, պ. պ. հոգաբարձուներ։ Ուրեմն... լաւ է ուշ քան երբէք։

Դանձակ, 10 դեկտ. Նուիրօ։

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏ

Նորերս Էտինբուրգում վախճանուեց Ֆրանց Գեգրիխը, որ գերմանական գրականութեան մէջ մի արտասովոր տեղ է բռնում։ Տասը տարի սրանից առաջ Բրեսլինցում ինքնասպանութեամբ իւր կեանքին վերջ դրեց Նշանաւոր գերմանական վիպագիր Ալֆրէդ Մէյսնէրը։ Դա մեծ ժողովրդականութիւն էր վայելում, ապահովուած մարդ էր, ուստի և ամենքը զարմացած էին մնացել, թէ ինչ պէտք է լինէր ինքնասպանութեան պատճառը։ Ցանկարծ լոյս տեսաւ մի գրքոյկ, որ նպատակ ունէր այդ հանելուկը լուծել։ Գրքոյկի հեղինակն էր մի բոլորովին անծանօթ մարդ՝ Ֆրանց Գեգրիխ։ Դա յայտնում էր, թէ Մէյնսէրի բոլոր վէպերի իսկական հեղինակն ինքն է։ Մասամբ բաշուելուց, մասամբ նիւթական միջոցների սղութիւնից, նա իւր աշխատութիւնները յանձնել է Մէյնսէրին, որ սա իւր անունով լոյս հանէ և արդիւնքն ստանայ, միայն իրան աշխատութեան համար վարձ տայ։ Մէյնսէրը խոստացած է եղել յայտարարել, թէ Գեգրիխը իւր աշխատակիցն է, բայց այդ խոստման իրագործումը միշտ յետաձգել է։ Երկար համբերելուց յետոյ՝ վերջապէս Գեգրիխը նրան սպառնում է դիմակը բաց անել։ Մէյսնէրը անպատուութիւնից ազատուելու համար ինքնասպանութիւն է գործում։ Գեգրիխը այդ բոլորը հաստատեց ի միջի այլոց և Մէյնսէրի սեպհական նամակներով։ Թէպէտ դրա դէմ խօսողներ դուրս եկան, բայց և այնպէս Գեգրիխը կարողացաւ հասարակական կարծիքը գրաւել։

ՆԱՄԱԿ Կ. ՊՕԼՍԻՑ

Դեկտ. 5.

Այժմ Սալը քաղաքին մինչև Գապարաչ շարուած են 5 դեսպանատանից 2-րդ պահականաւորն, որոնք կատարեալ մարտանաւեր են։ Անդրիանը Drayd 1070 թօնս տարողութիւն 3500 ձիու զօրութիւն 2 հատ, 4⁷ ինչ էս տրամագիծով արագարձագ թնդանօթ և ժամը 19 մղոն արագութիւն ունեցող թօրփիլանաւ մ'է. 1893-ին շինուած նաւատորմի պտշտպանութեան յատուկ։

Իտալիանը, Archimede, 784 թօնս տարողութեամբ, 1700 ձիու այժմ և 4 արագարձագ թնդանօթով նաւ մ'է։

Իսկ Գաղղիականը, Faucon, 1240 թօն տարողութիւն, 3200 ձիու այժ և 5 արագարձակ թնդանօթ ունի։

Պօլսոյ ժողովուրդը այդ նաւերի ներկայութեամբ մի բիչ ինքզինք ապահովուած զգալով, տեսակ մը լուռ համակրութեամբ կը համակրուի Զալաթիոյ քարափին վրայ և շատեր նաւակներով կերթան աւելի մօտէն տեսնել այդ փրկարար շէնքերը, ինչպէս ես ալ գացի նոյնը ընել։

Հակառակ կառավարութեան գուշակութեանց, ոևէ յուզում չի պատճառեց հոս այդ յաւելուածական պահականաւերու մուտքը, այլ ընդհակառակ բրիտանէից ապահովութիւն և թերևս չարամիտ տակաց ոմանց երկիւղ ներշնչեց, ի նպաստ քաղաքին ընդհ. անդորրութեան։

Սայիտ-փաշա իւր ապարանքն է։ Դեսպաններն առ հասարակ թէև փափագած են որ Նա ստանձնէր սուլթանին մօտ իրան առաջարկուած բարձր պաշտօնն, բայց ինք, մօտէն տեղեակ գտնուելով Եըլտըզի կեանքին և յիշելով Միհտաթ-փաշայի գլխուն եկածները, վճռապէս մերժած է. և կըմնայ ընդմիշտ անպաշտօն։

Առևտրական գործոց մասին ոչինչ կայ գրելու, վասնզի գործ չկայ։ Իսկ յունվարին կըհաղորդեմ ձեզ սնանկութեանց շարքը, երբ լրանայ 4 ամսեայ յետաձգման պետական կարգադրութիւնը վճարմանց մասին։

Սակարանը կայ ու չկայ. հոն արժեթղթոց առևտուրն այլևս էֆֆէքթիվ-ով կրկատարուի։ Օսմանեան երկաթուղին 96 ֆրանկ, Քոնսոլիտէն 21 զրշ. արժէ։

Ցունաց պատրիարքը հրաժարական տուած է, բայց չէ ընդունուած։ Կրսեն թէ պատճառն այն է, որ առանց իրենց սինոդի գիտութեան պոհանակութեան կիր մատուցած է սուլթանին։

Կրեատէն ապատամբութեան լուրեր կըգան, որով յոյները բաւական յուզուած են։

Պօսֆոր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Քաղաքական խնդիրների մէջ ներկայումս առաջնակարգ տեղ է բռնում Վենեցուէլայի սահմանագծի խնդիրը, որի պատճառով երկու մեծ պետութիւններ սպառնում են միմեանց։ Միացեալ-Նահանգները պատերազմի պատրաստութիւններ են տեսնում։ Մեծ Բրիտանիայի նախարարներից մէկը յայտնեց, թէ կարող է պատերազմ լինել։ Մամուլը և դիպլոմատիան միաձայն պնդում են, որ խնդիրը լուրջ և սպառնական կերպարանք է ստացել շնորհիւ Միացեալ-Նահանգների նախագահ Կլիվլէնտի վարմունքի, միաժամանակ տիրում է և այն կարծիքը, թէ հազիւ երկու մեծ պետութիւնների միջև պատերազմ ծագի, և թէ խնդիրը հաշտութեամբ կըվերջանայ։

Այս վերջին ցանկութեամբ է համակուած ամբողջ Եւրոպայի հասարակական կարծիքը, որովհետև մի այդպիսի պատերազմի տուած մտահոգական ծանր հարուածներին պէտք է ենթարկուին բոլոր երկիրները։

Միացեալ - Նահանգների նախագահ Մոնրոէի թէօրիան, թէ Ամերիկան ամերիկացիների համար է, թէ Եւրոպական պետութիւններն իրաւունք չունին Հիւսիսային և Հարաւային Ամերիկաներում նոր երկիրներ գրաւել, միայն Ամերիկայի հասարակական կարծիքն է։ Այժմ Կլիվլէնտը ձգտում է այդ կարծիքին միջազգային իրաւունքի հիմնական սկզբունքի այժ տալ, այդպիսի ցանկութեամբ նա Անգլիայի առաջև այնպիսի պահանջներ է դնում, որ չէ կարող ընդունել ոչ մի անկախ պետութիւն, ուր մնաց՝ թէ հպարտ Ալբիոնը։ Աւելի հեռու գնալով, Կլիվլէնտը պահանջում է Անգլիայից՝ իւր կազմած մասնախմբի որոշմանը ենթարկուել, այն ինչ Անգլիան չը-կամեցաւ նոյն իսկ միջնորդ դատարանի դիմել, թէև բոլոր նշանակներից երևում է, որ այդ դէպքում խնդիրն աւելի շուտով յօգուտ Անգլիայի կ'որոշուէր։

Այդ թշնամական դրութիւնն այժմ արդէն ցոյց է տալիս իւր ազդեցութիւնները։ Գլխաւորապէս Ամերիկան անտեսական ծանր վիճակի է ենթարկվում։ Բազմաթիւ նշանաւոր վաճառականներ սնանկացան. շատերը դադարեցրին իրանց գործունէութիւնը. արժեթղթերը կորցնում են իրանց գինը։ Եւ ամեն անկիւնից Կլիվլէնտի բռնած ընթացքի դէմ ծանր նկատողութիւններ և տրտունջներ են լսվում։ Սակայն Միացեալ-Նահանգներում հասարակական կարծիքն ընդհանրապէս Կլիվլէնտի կողմն է հակուած։ Միացեալ-Նահանգների նախագահը շարժեց ամերիկացիների հայրենասիրութիւնը և դրանով նա մեծ ժողովրդականութիւն է ստանում։

Կարծիք կայ, թէ Կլիվլէնտ նպատակն էլ հէնց այդ է եղել։ Ըստ ամենայնի նախարարի ընտրութիւններ կըլինին. և Կլիվլէնտը ցանկացել է աղմուկ հանել, ժողովրդի ուշադրութիւնը և համակրանքը վաստակել և այդպիսով նորից ընտրուելու համար հող պատրաստել։

Այդ իսկ հանգամանքը, որ նոր ընտրութիւններ են լինելու, առիթ է տալիս շատերին յուսալ, թէ մինչև Կլիվլէնտի նշանակած մասնախումբը իւր գործերը կ'աւարտէ, արդէն նոր նախարար կըլինի և խնդիրն այլ ուղղութիւն կըստանայ։

Այս յոյսն առաջանում է այն հանգամանքից, որ Կլիվլէնտի դէմ արտասանվն անչափ չէ թէ որակով և թէ քանակութեամբ։ „World“ լրագիրը, որ չափազանց տարածուած է և ամերիկական մամուլի լաւագոյն և նշանաւոր ներկայացուցիչներից մէկն է համարվում, քննելով Վենեցուէլայի խնդիրը, յայտնում է թէ Անգլիայի գործողութեանց մէջ պատերազմի լուրջ հիմք չկայ։ «Ասենք թէ Անգլիայի ձգտումները քմահաճ են և ապօրինի. բայց մի՞թէ այդ ձգտումները սպառնում են մեր անդորրութեանն ու ապահովութեանը, մի՞թէ նրանք սպառնում են մեր կառավարութեան ինքնուրոյն ձևին ու մեր ազատ հիմնարկութիւններին»։ Լրագիրը գտնում է, թէ Մեծ-Բրիտանիային նոր-Աշխարհում օտար համարելն անմտութիւն է, որովհետև անգլիական Քանադան ու Գոլումբիան սահմանակից են Միացեալ-Նահանգներին, որովհետև Անգլիան Ամերիկայում աւելի հողեր ունի, քան Միացեալ-Նահանգները։ «Պատերազմ սպառնալ, ասում է լրագիրը, երբ ի նկատի չունինք այդ պատերազմը, երբ պատրաստուած չենք դրա համար և երբ չենք կարող քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը յուսալ, կընշանակէ խոչընդոտել։

Այս կողմից ուշադրութեան արժանի է և Միացեալ-Նահանգների պաշտօնական ներկայացուցչի ճառը, որ խօսունցաւ Լօդօնում։ Այդ ճառով՝ ինչպէս հաղորդեց հեռագիրը, Ամերիկայի դեսպանը յայտնում էր այն միտքը, թէ Անգլիայի և Ամերիկայի միջև պատերազմ չի կարող լինել։

ԴԵՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻՍՏՈՒՄ

Պաշտօնական թիւրք այրիւրներից հաղորդում են «Նովոյէ Վրէմիային».—Զօրաբանակի հրամանատար Մուստաֆա-Բէյմի փաշան ուղարկել է Բ. Դուռն հետևեալ հեռագիրը Նոյեմբերի 25-ից.

«Առաջնակարգ քաղաքացիք, որոնք ուղարկուած էին Մարաշից Զէյթուն, այնտեղի ապստամբներին համոզելու համար, այսօր ներկայացան ինձ և յայտնեցին, որ այդ ապստամբները ծայրայեղ ընդդիմութիւն են ցոյց տալիս և որ անցեալ կիրակի, այսինքն այս հեռագիրն ուղարկելուց 3 օր առաջ, նրանք կոտորել են Զէյթունում գերուած բոլոր զինուորականներին բացի գնդապետից, նրա ադիւտանտից և գաւառապետից։ Գնդապետ Արաֆի-բէյ յետ մղելով ապստամբների յարձակումը Միխալ գիւղում, որ մի ժամ հեռաւորութիւն ունի Զէյթունից, ամրացել է մի լաւ դիրքում, որի դէմ ու դէմը մենք ենք գտնվում. ուստի Զէյթունը պաշարուած է երեք կողմերից։

Մի քանի արտասահմանեան թերթեր ուշադրութիւն են դարձնում այն հանգամանքի վրայ, որ լորդ Սալիսբուրիի Վեստմինստրի դքսին տուած կողմնակի պատասխանից յետոյ Վեննայի «Politische Correspondenz» լրագրում հետևեալ տեղեկութիւնն է տպագրուած Պետերբուրգից։

«Ռուսաց կառավարութիւնն այն կարծիքի է, թէ պետութիւնները պէտք է պաշտպանեն սուլթանի ջնջները, որոնց նպատակն է Փոքր-Ասիայում կարգը վերականգնել և իւր իշխանութեան ազդեցութիւնը զօրացնել»։

* * * Կոստանդնուպօլսից հաղորդում են, թէ տաճիկ կառավարութիւնն ըստ երևոյթին յետ է կանգնել պահականաւերի մօտ իւր նաւերը կանգնեցնելու նպատակից։ Նոր հրամանագիրը միայն պահանջում է որ Ոսկեղջրում կանգնած տաճկական նաւատորմիղը բարեկարգ վիճակի մէջ լինի, բայց այդ ևս անհնարին է։ Պահեստի զօրքերի հրաւիրելը դժուարանում է դրամի պակասութեան պատճառով, ուստի և շորրորդ զօրաբանակից շատ թուով զինուորականներ կ'արձակուեն պաշտօնից։

ԻՏԱԼԱԿԱՆ ՆԱՒԱՏՈՐՄԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Զմիւռնիայից հաղորդում են, թէ Իտալական նաւատորմիղը՝ որ կանգնած էր տաճկական ջրերում Անչինի հրամանատարութեան տակ, պատրաստուել է Իտալիա վերադառնալ։ Նաւատորմը թողնելով Արշիպեղագոսում միայն «Պիէմոնտէ» և «Պարթենոպէ» երկու նաւերը, կըմտնի ծով դեկտեմբերի 8-ին։

ԸՆԴԴԻՄԱԼՈՕՍՈՒԹԻՒՆ

ԲԱՑ ՆԱՄԱԿ

Պարոն Գէորգ Պետրոսեան.

Անկեղծ խոստովանում եմ որ լրագրական բանակռիւը ինձ մի առանձին հաճոյք չէ պատճառում, բայց այս անգամ ստիպուած եմ պատասխանել ձեր նամակի այն կէտին, որ վերաբերում է ինձ (Տես «Արձագանքի» № 137-ը), ուր դուք մեղադրում էք ինձ որ ես *ջէնտլմէն* չեմ գտնուած և մասնաւոր նամակից քաղուածքներ եմ արել։

Նախքան ձեր պատասխանելը, մի հարց, պարոն Պետրոսեան. եթէ ես հաստատեմ որ այդ չարագուշակ նամակը պաշտօնական և ուղղակի հայ դեռասնական ընկերութեան հեռագրի պատասխանն է, արդեօք այնքան քաջութիւն կ'ունենանք, որ յետ վերցնէք ձեր շռայլած անտեղի խօսքերը և ասէք. «Այո, յիշողութիւնս դաւաճանեց, ես ինքս չէնտլմէն չեմ»։

Գիտացէք, պ. Պետրոսեան, որ ձեր պաշտօնական (բայց ոչ մասնաւոր) նամակը ցոյց է տրուած նոյն իսկ ձեր տաղանդով յափշտակուած բարեկամներին։ Ճշմարտութիւնը հաստատուած է։ Իսկ եթէ ցանկութիւն ունիք, ձեր թշնամութեամբ, փոյթ չէ, կըտպագրենք այդ տառասխալներով լի նամակը, չնայելով որ նրա բովանդակութիւնը պատիւ չի բերիլ ձեզ։

Այժմ, պ. Պետրոսեան, մի բոպէ թոյլ տանք, թէ ես մասնաւոր նամակից քաղուածք եմ արել, հիմա պատասխանեցէք հետևեալ հարցերին՝ 1) դուք ստացա՞ք թէ ոչ Զուշիում «Товарищество» ստորագրութեամբ մի հեռագիր, ուր ձեզ առաջարկուած էր մի ամբողջ բենեֆիս և ամսական մի հարիւր յիսուն ռուբլի ռոճիկ *); 2) հեռագրի պատասխանը վճարուած էր թէ ոչ։ 3) Արդեօք դուք չէք որ հեռագրով յայտնեցիք, թէ «պատասխանը կըստանաք չորեքշաբթի նամակով», և 4) ձեր այդ ընկերութեան պատասխանն արդեօք իմ հասցէով չէ՞ր **)։

Նախքան ձեզանից վերոգրեալ հարցերի պատասխան ստանալը, ըստ ձեր ասութեան ենթադրենք մի բոպէ, «որ դուք ընկերութեան նամակին կամ (հեռագրին) չէք պատասխանել պաշտօնապէս». այժմ ասացէք խնդրեմ, այդ ո՞ր քաղաքավարական ազնուութեան կամ ջէնտլմէնական կանոններով էք վարուել, որ մի վճարած հեռագրին անպատասխան էք թողնում, իսկ եթէ պատասխանել էք, հապա ուրեմն այդ ի՞նչ «պատասխան» է, ի՞նչ հասցէով և ի՞նչ է նրա բովանդակութիւնը։

Թողնենք այս ամենը մի կողմ և առայժմ դառնանք այն էֆեկտին, ուր դուք կանգնած էք՝ դերասանների «անապահով» կացութեան մասին։ Այդ շատ իրաւացի է, բայց ոչ ձեր վերաբերութեամբ. դուք իզուր էք հայ բեմը անուանարկում։ Նոյն իսկ ձեր խօսքերով, ձեր գրած նամակներով, ձեր ընկերների վկայութեամբ այս տարի՝ յունվարից մինչև սեպտեմբեր ամիսը, առանց կոմիտէի, անիշխանութեան ժամանակ միշտ «առիթի բաժինը» դուք էք ստացել։ Հայ բեմի շնորհիւ դուք դարձաք այն՝ ինչ որ էք, և ոչ մի բէալական. նոյն իսկ համալսարանական դիտութիւնը (այդ իմ համոզմունքն է) ձեզ այն չէր տալ, ինչ որ ստացել էք մինչև այժմ «Հայ բեմից»։ Մի մոռանաք որ դուք ի բաց առեալ նուէրները, ստացել էք մի առաջնորդի ռոճիկ, որ երեք նահանգներից բաղկացած մի թեմ է կառավարում. այս, դուք ստացել էք մի նահանգական դատարանի նախագահի ռոճիկը շաբաթական «Քին» խաղալով, և դեռ տրտնջում էք։ Հապա այն դափնիները, լրագրական գովեստները, միով բանիւ բարոյական վարձատրութիւնները ձեր աչքում արժէք չունի։

Արդեօք կարո՞ղ էք բացատրել, պարոն Պետրոսեան, թէ ի՞նչ առիթով յիշում էք դրամատուրգ Գ. Սունդուկեանցի, երևսունից աւել չարքաշ տարիներ անցուցած տ. և պ. Զմչկեանների, բաւիս բուն նշանակութեամբ տաղանդաւոր կոմիկ պ. Գ. Տէր-Դաւթեանի անունները։ Արդեօք այդ ամենը մի շողոքորթութիւն չէ՞, արդեօք այդ յօդուածը համեմել չէ նշանակում...Է՛հ, պ. Պետրոսեան, թոյլ տուէք ինձ ես կրկնել միակ գիտեցած լատինական առածը՝ Sapienti sat!

Ա. Սարդարեանց։

*) Այն ռոճիկը, ինչ որ ստանում էիք վերջին տարին հարուստ կոմիտեի օրով, այն ռոճիկը՝ որ ստանում էր հանգ. Ադամեանը իւր պանդխտութեան ժամանակ։ Արդեօք երբ և իցէ համեմատել էք ձեր տաղանդը հանգուցեալի տաղանդի հետ։

**) Եթէ կարդացել էք հայ թերթերը՝ ի գիտաց ընկերութեան ստորագրած պ. Գ. Տէր-Դաւթեանի «հրաւէր» վերնագրով նամակի մէջ հասցէն ցոյց էր տրուած «Աղամ Սարդարեանցին»։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Դեկտեմբերի 16-ից.

ՄԻԼԱՆ («Նով.»).—Իտալացիները մաքրեցին Արսումը։ Մակոնէնի զօրքը գնում է դէպի Ալիպրատ, որի բնակիչները թողել հեռացել են։ 4,000 դերվիշ երևացին Ամբրօսում։ Ասում են որ Մախոյը դիմելով դերվիշներին՝ կոչումն է արել իտալացիներին ջնջելու անհրաժեշտութեան համար։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Դեկտեմբերի 12-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով։

Լօնդօնի վրայ 10 ֆ. ստ.	94, 00
Բերլինի վրայ 100 մարկ	45, 70
Փարիզի վրայ 100 ֆր.	37, 15
Նոր կտրած պոլտինաներ	7,50 գն. 7.50 վաճ.
Բօրսայի գեղջը	6½-ից 7½%
4% Պետական արժեթղթ.	98
% ոսկ. արժեթ. 1894 թ.	98
5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	282
5% երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ.	236¾
5% Ազնուական. հող. բանկի գրաւական. խաղատոմս.	205½
5% Պետական երկաթուղու արժեթուղթ	100
4% Ներքին փոխ. I սեր.	97½
» » » II »	97½
» » » III »	97½
» » » IV »	97½
4½% փոխ. 1893 թուվ.	100
» փոխ. 1 հրատարակ.	100
» փոխ. 2 հրատարակ.	100
4½% Գրաւական. արժեթղթ. ազն. հողային բանկի.	100
4½% Գիւղական հողային բանկի վկայագրեր.	100
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	100¼
» Մոսկուայի	100¾
5½% Օդեսայի	99½
5% Թիֆլիզի	97½
5% Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի	99¾
» Պոլտավայի	99
» Տուլայի	100
» Կիևի	100
» Մոսկուայի	100
» Բեսարաբիայի	98¾
» Ներքին Սամարայի	100
» Գոնսկոյ	98¾
» Վիլնոյի	99
6% և 5% Թիֆլիզի	101 և 99 գն.
» Քութայիսի	101 և 99½ գն.

ԶԱՆԱԶԱՆ

Lapsas calami. «Նոր-Դարում» կարդում ենք բառացի հետևեալ տողերը.

«Ոչ մի ուրիշ խմբագրութիւն մի տարուայ ընթացքում այնքան ձրի թերթ չէ տուել զանազան հաստատութիւններին և շունչեր անհատներին, ինչքան նուիրել է թերթիս խմբագրութիւնը տասներկու տարուայ ընթացքում»։

Սակայն ընթերցողներին չպէտք է զարմացնի այս թարս դատողութիւնը, քանի որ լրագրի նախընթաց 221-րդ համարից է սկսուել այդ թերաստութիւնը։ Այնտեղ ընթերցողների զարմացած աչքերին խմբագրի ստորագրութիւնը ներկայանում է հետևեալ ձևով՝

ՀԱՅԱՍԵՐՈՒՆ-ՍԱՍԵՐՈՒՆ
Հիկոմատովչ-Դիմոմրոլ

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ։

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԵՐՍԵՍԵՐԵՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՀԻՆՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ԴՈՒՆԱՅԵՎԱ - ԲՈՒԴԵՆԿՈ—11—12 ժ. կանանց և երեխայոց համար։

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մոլթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խոխ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիում) և օգնականի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՈԿՏՈՐ.

ԱԼԵՔՍԻՐ ԲԱԲԱՅԵՎԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

Բացի զեղերից զբաղուում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիկական մեթոդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵՍՐԴԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ ընդունվում են ամեն օր (բացի կիրակի և ազգ օրերից)

2—3 ժ. ցերեկը { կինարմանները և երեխաները

6-ից երեկոյան { տղամարդիկ

Ընդունարանում գտնվում են որոշակի ժամերում մանկաբարձ-մասնաժ անող կին և մասնաժիստ պարոն։

Անդրկովկասեան երկաթուղի

Մարզպատը գնացքը Թիֆլիզից Բաթում գալիս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու գալիս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆիլիզից Բաթում գալիս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարզպատը գնացքը Բաթումից Թիֆլիզ գալիս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ գալիս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ գալիս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ադրանքա-մարզպատը գնացքը Թիֆլիզից Դանձակ գալիս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 բոպէին։

Ադրանքա-մարզպատը գնացքը Դանձակից Թիֆլիզ գալիս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 բոպէին։

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹԻՒՆԸ

Վրաց զարտեզագիտական Ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մշլեթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչեւ 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղեւորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մշլեթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչեւ 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղեւորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչեւ 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ԶՈՐԵՆԱՒՈՐԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

Բաթումից դուրս է գնում

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 3 ժ.) շաբաթաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով Նովորոսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստապօլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս շաբաթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարզպատը շաբաթաւոր բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շաբաթաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարզպատը շաբաթաւոր, շաբաթաւոր ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ —օրերը երեկոյեան, շաբաթաւոր ընթացքով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Կենդրոնական Գրավաճառանոցում (Թիֆլիզ)

Ստացվել են ծանրագոյն ապրանքներ վերջին ոճով գրավաճառ տարազներ կանանց համար։ Գրավաճառանոցում մեծ քանակությամբ հագուստներ և ստացել վաճառվում գրքեր։ Այդ գրքերի անուանական ցուցակը, բացի դրանից դրվում է «Արմատական մասնաբաժնի մեջ, իսկ ով որ բաժանորդագրվում է «Արմատական մասնաբաժնի մեջ, նրան տրվում է ամենամյա «Քաղաքացի»-ում։ Նոյն տեղը բաժանորդագրվելիս նրանց տրվում է ամենամյա «Արմատական մասնաբաժնի» մեջ մտնելու իրավունք։ Գրքերի գները ամենաէժան են։ Գրքերի հանար ճանապարհներ չեն վճարում։

ԲԺՇԿԱՊԵՏ

Ե. Ս. Ֆրանցիուս

տեղափոխուց Վելիամինովսկայա փողոց. տ. № 14. Քաղաքային դումայի հանդէպ։

Ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ ունեցող հիւանդների ընդունելութիւնը տեղի է ունենում 5—7 ժամը երեկոյեան։

(10—6)

Լոյս տեսաւ

Դ. ԾԵՐԵԹԵԼԻՆ

ՄԱՐԴ-ԱՌԻՒԾ

ՊՕԷՄԱՆ

(Պատկերազարդ)

Փոխադրեց

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑ

Ծախվում է բոլոր գրավաճառ նոյնեղում։

ԳԻՆՆ Է **20** ԿՈՊԵԿ։

(1—4)

ԿԻՆ ԲԺԻԶԿ

Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր տաւաւտեան 12 ժամից մինչեւ 2-ը և երեկոյեան 6—7-ը։ Վէրայի գաւիթում, տ. Օսիպովի։

ՊԱՏԻՒ ՈՐՆԻՆՔ, յայտարարելու պ.պ. հեղինակներին ու թարգմանիչներին, որ սոյն նոյեմբերի մէկից մենք բաց ենք արել Բագուայ, ս. Լուսաւորիչ եկեղեցոյ բակում, մեր սեպհական շինութեան մէջ գրավաճառանոց, ռուսերէն և հայերէն գրքերի, վաճառոյ խնդրում ենք ուղարկելու իրանց հեղինակութիւններից վաճառելու համար ընդունուած պայմաններով.

Նոյնպէս վաճառում ենք դասական գրքեր ու պիտոյքներ և եկեղեցական ժամ։ Մեր հասցէն Баку, Колюбакинская улица, книжная торговля А. Авакова и Е. Султаньянца. (3—3)

«Կենդրոնական գրավաճառանոցից» կարելի է ձեռք բերել

ՔԱՄԱԼԵՏՆՑ Ս-Ի ԳՐՔՈՅԿՆԵՐԸ

Հէրեմիներ (5 պատմութիւն)
Ծովինար.
Ձէն թագաւոր.
Գալ Ափօ.
Ատուած չճանաչող.
Խալ-Խաչիկ։

Մամուլի տակ է «Ատուած աղքատի կերպարանքով» նոր աշխատութիւնը։

Թիֆլիզի քաղաքային վարչութիւնը

այսու հրաւիրում է նրանց, որոնք կրցանկանան աճուրդին մասնակցել մեծ կոյուղի շինելու այսպէս անուանուած Մագէրովսկի փողոցի վրայ Թիֆլիզ քաղաքի 9-րդ քաղաքամասում, սկսելով Նարիմանովի փողոցից։ Աճուրդը կըլինի սոյն դեկտեմբ. 29 ին, ցերեկուան ժամը 12-ին։ Այդ աճուրդի պայմանները կարելի է տեսնել ամեն օր քաղաքային վարչութեան շինութեանց բաժնում առաւօտեան ժամը 10-ից մինչեւ ժամը 2 ը հաշից յետոյ։ (2—1)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԵՐԳՈՐԴ ՀԱՏՈՐԸ՝

„ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՅ“

(Աշակերտական մասը)

Սահակ քահ. Սահակեանց։

(5—3)

„ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ“ (ԹԻՖԼԻԶ)

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.—

	Ռ. Կ.
Աղանեան. Պատի օրացոյց 1896 թ. առ. տ. գինն է	— 60
» Նոյն երկրորդ տեսակ գինն է.	— 30
Արծրունի ըժ. Վ. Դպրոցական առողջապահութիւն. գինն է	— 50
Էջմիածնի օրացոյց 1896 թ. փառակազմ. գինն է	— 25
Զմշկեան Մ. օրացոյց 1896 թ. գինն է	— 15
Վենետիկի օրացոյց 1896 թ. գինն է.	— 20
Բահաթրեան. Առ. առաջին ընթերցարան երկ. պատկեր. տ. գինն է	— 40
Բարխուդարեան Յ. (մանկավարժ) Մանկական խաղեր. գինն է.	— 50
Գարագաշեան. Քննական պատմութիւն Հայոց. 4 հ. գինն է	4 —
Ճաղարբէգեան Յ. Պատմութիւն Հայոց, պատկերազարդ. գինն է	— 40
Ծերեթէլի Մարդ-առիւծ. գինն է.	— 20
Լումայ. Գարօյի ընտանիքը, վէպ Թիֆլիզի կեանքից. գինն է.	— 60
Պոլշանց Պ. Յուշիկներ. գինն է	1 —
ԲաՀՔի. Զահրումար. վէպ Թիֆլիզի հայերի կեանքից. գինն է.	2 —
» Խոմսոյի մելիքութիւնները երկ. տպ. գինն է	1 75
Քալանթար Սասուն, գինն է	— 20
Պատկանեան (Գ.-Ք.) Էնարը երկասիրութիւններ, 2 հատոր. գինն է	4 —

Նոյն տեղը բաժանորդագրութիւն է բացուած բոլոր տեղական և օտար երկրների պարբերական հրատարակութիւնների։ Կ. (3—2)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԵԱԿՕՐ“

Բարձրագոյն հաստատուած 1872 թուին։

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ 2,500,000 ռ. ԲԱՑԻ ՊԱՀԵՍՏԻ ԴՈՒՄԱՐՆԵՐԻ։

ՀՐԴԵՀԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն տեսակ շարժական և անշարժ կայքերի։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծովային գետային և ցամաքային, այլ և ապահովագրութիւն նաւերի։

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Առանձնապէս ձեռնտու պայմաններով և արտօնութիւններով ի գէպս աշխատաւորների անընդունակ դառնալուն։

Օրինակ—30 տարեկան անձն ապահովագրում է 10,000 ռ. գրամագլխի, որ պիտի առ տրուի իւր մահից յետոյ, երբ էլ մահը վրայ հասնելու լինի։ Այդպիսի ապահովագրութեան համար նա պէտք է իւրաքանչիւր 4 ամիս վճարէ 79 ռ., եթէ ցանկանում է արտօնութիւններ ունենալ աշխատանքի անընդունակ դառնալու դիպուածում։ Այս ապահովագրութիւնն իրական ապահովութիւն է այն անձանց ընտանիքների համար, որոնք մէջտեղը են ձեռք բերում անձնական աշխատանքով, որովհետև ապահովագրուած անձի աշխատանքի անընդունակ դարձած դիպուածում արուող գրամագլխին ապրուստի միջոցների համար նեցուկ է։

Ապահովագրութեան համար յայտարարութիւնները ընդունվում և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Ընկերութեան Գլխաւոր Վարչութեան մէջ Մոսկվայում, Էնկ. Գոլիկոսի Վարչութեան մէջ՝ Թիֆլիզում (Վելեամինովսկայա փ. տ. № 2) և գործակալութիւնների մէջ՝ Կայսրութեան բոլոր քաղաքներում։

Հաստատութեան յարմարութեան համար ապահովագրութիւնների ընդունելութիւնը բացուած է Կուկիայում, 3-րդ հաշտարար դատարանի կողքին, տ. Ալեքսանի, Թեոդոր Ալեքսանդրովիչ Իսանովի բնակարանում։ (100—55)

„НЕДѢЛЯ“

Принимается подписка на 1896 г. (Двадцать-девятый годъ изданія).

„НЕДѢЛЯ“ состоитъ изъ двухъ изданій: еженедѣльной общественно-политической газеты „НЕДѢЛЯ“ и ежемѣсячнаго литературнаго журнала „КНИЖКИ НЕДѢЛИ“.

Соединеніе еженедѣльной общественно-политической газеты съ ежемѣсячнымъ литературно-критическимъ журналомъ даетъ возможность редакціи „НЕДѢЛИ“ охватывать въ своемъ изданіи всѣ интересы текущей жизни, подлежащіе вѣдѣнію періодической печати.

Цѣна газеты „НЕДѢЛЯ“ съ „КНИЖКАМИ НЕДѢЛИ“ девять рублей въ годъ съ пересылкой и доставкой.

Въ уплатѣ подписной суммы допускается разсрочка: при подпискѣ—5 руб. и къ 1-му іюня—4 р., а также и на другихъ условіяхъ по соглашенію подписчика съ конторой редакціи.

Подписка принимается: въ С.-Петербургѣ, въ конторѣ редакціи „НЕДѢЛИ“, Ивановская, 4.

(3—2) Редакторъ-издатель **В. П. Гайдебуровъ.**

ՕԹԻՏԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏԱԳԵՐԱՆՑ ՀԱՄԱՐ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆ Է **23,000,000** ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տակտարեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ծնողներին, խնամատարներին և առ հասարակ այն անձանց, որոնք ցանկանում են ապահովացնել աղջկանց ապագան, «ՐՕՍՍԻԱ» ընկերութիւնը առաջարկում է օժիտի (բաժինք) ապահովագրութիւնը։

Օրինակ, եթէ ցանկանում են երկու ամեայ աղջկայ համար ապահովացնել 5000 ռուբլի օժիտ, այնպէս որ, 18 տարեկան ժամանակին ստանան այդ գումարը (այսինքն 16 տարուց յետոյ), այն ժամանակ այդ տեսակ ապահովագրութեան համար ապահովագրողը «ՐՕՍՍԻԱ» ընկերութեանը պիտի վճարի ամեն 3 ամսից յետոյ 52 ռուբլի։

Սոյնանման ապահովագրութիւններ կարելի է կայացնել նաև այն պայմանով, որ ապահովագրողին անմիջապէս վերադարձուին բոլոր իր վճարած տուրքերը (պրէմիաները), եթէ միայն ապահովագրուած երեխան վախճանուի պայմանաւորեալ ժամանակից առաջ։

1895 թուի յունվարի 1-ին «ՐՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 31,701 անձինք 83,708,760 ռուբլի գրամագլխով։

Տղայ երեխաների համար ևս կարելի է ապահովացնել դրամագլուխ նոյն կերպով, ինչպէս աղջկանց, և այդ գրամագլուխը կը ստացուի իբրև թոշակ (պէնսիա) կրթութիւնը շարունակելու համար, եթէ միայն ապահովագրած երեխան կապրի մինչ պայմանաւորեալ ժամանակամիջոցը։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (**Большая Морская**, սեփական տուն, № 37), *Գոլիկոսեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնում է՝*

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեւսկայա փ. տ. № 6. (երկրորդ յարկում) և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

52—41

ՔԱՂ. ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԹԱՂ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ՀԱՍՑԷՆԵՐԸ

I եւ II քաղաքամասեր	Վ. Մ. ԱՐԹՈՒՌԻՆ, Գոլովինսկ. պրոսպ. տ. Ադամեանցի № 28 Ն. Գ. ԿԱՍՈՒՄՈՎ, Միքայէլեան փողոց, տուն Պիրի № 118 Մ. Ա. ՄԻՐԱՔՈՎ, (ժամանակաւոր), Գէյդ. փող. սեպհ. տ. № 21
III, IV եւ V քաղաքամասեր	Յ. Ա ԳՕՆԻԷՎ, Սադովայա փողոց, սեպհական տ. № 69
VI քաղաքամ.	Գ. Բ. ՏԷՐ-ԱՍԱՏՈՒՐՈՎ, Զօրանոցովսկայա փողոց, տ. Եդիգարովի № 55, բուժարանի տունը։
VII քաղաքամ.	Գ. Գ. ԳՈՒԼՈՒԼԵԱՆՑ, Կախետինսկայա փողոց, տուն Տէրտէրովի № 26, բուժարանի տունը։
VIII եւ XI քաղ.	Գ. Ա. ԹԱՐԽԱՆՈՎ, Ելիզավետինսկ. փողոց տ. № 70
X քաղաքամ.	Գ. Ա ԴԷԴԱԼԻՆ, Միքայէլեան և Կօչուբէյեվսկի փողոցների անկիւն, տուն Ուլանցեվայի № 2։

Խնամակալող բժիշկ Ե. Ա. ԲԱԶԱՄԱՑ, Սոլոլակի փող. տուն Սումբատովի. № 1։

(3—2)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

Հեղինակ Զեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է

երկու տեսի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։

ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

ա) Գրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերասինի գործարանական հաշուատեսութեան։

բ) Առևտրական թուաբանութիւն։

գ) Առևտրական նամակագրութիւն։

դ) Գեղագրութիւն և ամենատար ձեռքերի ուղղութիւն։

Պարապմունքները սկսուելու են յունվարի 5-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր ՀՈՐՍ ամսից յետոյ.

Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչեւ $4\frac{1}{2}$ ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Ֆրէյլինեան փողոց, տուն Սուլթանովի, № 13։

Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպ.։

Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—6)

ОТКРЫТА ПОДПИСКА на 1896 г.

НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

[тринадцатый годъ изданія].

Въ 1896 г. „Новое Обозрѣніе“ будетъ выходить **въ Тифлисѣ**, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ газеты литературной, общественной и политической, **НО ВЪ УВЕЛИЧЕННОМЪ ФОРМАТѢ.**

ПЛАТА ОСТАЕТСЯ ПРЕЖНЯЯ: съ пересылкою и доставкою: на годъ—**10 р.**, на полгода—**6 р.**, на три мѣсяца—**3 р. 50 к.**, на одинъ мѣсяцъ—**1 р. 50 к.** *За границу*: на годъ—**17 р.**, на полгода—**9 р.**, на 3 мѣсяца—**5 р.** (Подписка принимаются не иначе, какъ считая съ перваго числа любого мѣсяца). Для сельскихъ учителей и благотворительныхъ учрежденій **ПЛАТА ПОНИЖЕННАЯ**: на годъ—7 р., на полгода—4 руб.

Для годовыхъ подписчиковъ какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка принимается въ Тифлисѣ—въ конт. газеты, Барятинская, № 8.

Лица, подписавшіяся на годовое изданіе „Новаго Обозрѣнія“ 1896 г. въ настоящее время, будутъ безплатно получать газету въ текущемъ году со дня подписки. (2—2)

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՄԱՅՍՈՒՐԵԱՆՑԻ

Տեղափոխուած է Բարոնական փողոց, Գոլուբակիս տունը՝ պահականոցի մօտ։ (15—14)

ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԿՐԱԿԻ ԴԷՄ ԹԻՖԼԻԶՈՒՄ

ապահովագրում է Թիֆլիզի ամեն տեսակ շինութիւնները։

ՏԷԼԵՖՕՆ № 288.

Վարչութիւնը գտնվում է քաղաքային տունը, Երևանեան հրապարակի վրայ և բաց է առաւօտուայ 9 ժամից մինչեւ $2\frac{1}{2}$ ը։

Մուտքը՝ Վելեամինով. փողոց, քաղաքային դումայի պօղեզդ։

(Ուրբ.) (21—19)

ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ ГРИГОРОВИЧА

Подписчики „НИВЫ“ получатъ въ **1896 г.** **52 №№** журнала „НИВА“ (до 1500 столбцовъ текста и 500 гравюръ).

12 ТОМОВЪ ПОЛНАГО СОБР. СОЧИНЕНІЙ

Печ. на хорошей глазированной бумагѣ

Д. В. ГРИГОРОВИЧА.

12 КНИГЪ „Ежемѣсячныхъ литерат. приложеній“, въ увелич. объемѣ.

12 №№ „Парижскихъ модъ“, заключающихъ въ себѣ въ теченіе года до 600 модныхъ рисунковъ.

12 №№ рукодѣльныхъ и выпильныхъ работъ и выкроекъ (съ 600 рисун. и чертежами въ теченіе года).

ПОРТРЕТЪ Государыни Императрицы АЛЕКСАНДРЫ ѲЕОДОРОВНЫ, по оригиналу художника **И. С. Галкина**, отпечат. въ 27 красокъ, размѣр. 18 вершк. вышины и 14 верш. ширины.

„СТѢННОЙ КАЛЕНДАРЬ„ отпечатанный красками.

ПОДПИСНАЯ ЦѢНА

за годовое изданіе „НИВЫ“ со всѣми приложеніями:

Безъ доставки въ С.-Петербургѣ. . **5 р.**
Съ доставкою въ С.-Петербургѣ. . **6 р. 50 к.**
Безъ доставки въ Москвѣ чр. конт. Н. Печковской . **6 р.**
Съ пересылк. во всѣ города и мѣстности Россіи. **7 р.**
ЗА ГРАНИЦУ. . . **10** р.

Допускается разсрочка платежа въ ДВА и ТРИ СРОКА.

Съ требованіями обращаться въ главную контору журн. „НИВА“, С.-Петербургъ, Малая Морская, 22.

Безплатное приложеніе на 1896 г.

ПРИ ЖУРНАЛѢ

НИВА

(М.) (3—2)

Дозволено цензурою Тифлисъ, 16-го Декабря 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца и К°. На Михайловской ул., № 81.